Սուրբ Աստվածածնին նվիրված հոգևոր երգը կատարվում է Աստվածածնի տոներին, Պատարագի ընթացքում:

Խնկի ծառին նման ես

Խնկի ծառին նման ես, պտուղ դու քաղցրահամ ես,
զԲարի պտուղ բերեալ ես, Աստուածածի՛ն, մեղա՛յ քեզ...
Խնկի ծառին նման ես, դու քաղցրահամ պտուղ ես,
Բարի պտուղ ես բերել, Աստվածածին, մեղավոր եմ քո առաջ...

Դու հողանիւթ սրովբէ ես, հարսն ի յերկրէ յերկինս ես,
զԱստուած մարմնով ծնեալ ես, Աստուածածի՛ն, մեղա՛յ քեզ...
Դու հողանյութ սերովբե (վերին դասի հրեշտակ) ես,
Մարմին առած Աստված ես ծնել, Աստվածածին, մեղավոր եմ քո առաջ...

Դու յորդառատ աղբիւր ես, ծարաւելոց արբումն ես,
Մեղաւորաց քաւիչ ես, Աստուածածի՛ն, մեղա՛յ քեզ...
Դու հորդառատ աղբյուր ես, ծարավների խմիչք ես,
Մեղավորների (մեղքերի) քավիչ ես, Աստվածածին, մեղավոր եմ քո առաջ...

Դու լուսեղէն տաճար ես, ոսկիապատ խորան ես,
Դու մարգարիտ, անգին ես, Աստուածածի՛ն, մեղա՛յ քեզ:
Դու լուսեղեն տաճար ես, ոսկիապատ խորան ես,
Դու մարգարիտ, անգին ես, Աստվածածին, մեղավոր եմ քո առաջ...

Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի քոյ. և բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զքեզ, Տէր. և ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն ձայնիւ խորհրդականաւ.Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց:

Հազարավոր (հազարներից հազարները) հրեշտակապետեր կան Քո առաջ և տասը հազարավոր հրեշտակներ են պաշտում Քեզ, Տեր: Եվ համաձայնեցիր մարդկանցից օրհնություն ընդունել (որ երգում են) զգոն ձայնով՝ Սուրբ, Սուրբ, Սուրբ, զորությունների Տեր: